79 **Կատարել համապատասխանեցում.**

#	Իրադարձությունը	#	Տարեթիվը	#	Վայրը
1.	Գերմանական կայսրության հռչակումը	1.	1870թ.	1.	Շուշի
2.	շահ Աղա Մոհամմադի սպանությունը	2.	1871թ.	2.	Թեհրան
3.	Ժողովրդական ապստամբությունը Երկրորդ կայսրության դեմ	3.	1905թ.	3.	Վերսալ
4.	Զանգվածային տարերային ընդվզումները շահական իշխանությունների դեմ	4.	1861թ.	4.	Փարիզ
		5.	1797թ.	5.	Հռոմ

1)

1	1	4
2	4	1
3	5	3
4	2	2

2)

1	5	4
2	1	2
3	3	5
4	2	1

3)

1	2	3
2	5	1
3	1	4
4	3	2

4)

1	2	3
2	5	5
3	4	4
4	3	2

80 **Կատարել համապատասխանեցում.**

#	Իրադարձությունը	#	Տարեթիվը	#	Գործիչը	#	Վայրը
1.	Կարիբյան ճգնաժամը	1.	1974թ.	1.	Ու. Չերչիլ	1.	Ատլանտյան օվկիանոս
2.	Ուոթրգեյթյան գործը	2.	1946թ.	2.	Ռ. Նիքսոն	2.	Ֆուլտոն
3.	Սառը պատերազմի սկիզբը	3.	1962թ.	3.	Մ. Թեթչեր	3.	Վաշինգտոն
4.	Ֆոլկլենդյան պատերազմը	4.	1982թ.	4.	Ջ. Քենեդի	4.	Կուբա

1)

1	3	4	4
2	1	2	3
3	2	1	2
4	4	3	1

2)

1	2	4	3
2	1	2	2
3	4	3	1
4	3	1	4

3)

1	3	4	4
2	1	2	3
3	4	1	2
4	2	3	1

4)

1	2	4	4
2	3	1	3
3	1	2	1
4	4	3	2

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2012

ԸՆԴՀԱՆՈՒՐ (ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ե՞րբ է Բաբելոնիայի թագավոր դարձել քաղդեացի ցեղապետ Նաբոպալասարը.**

1) Ք.ա. 626թ.
2) Ք.ա. 705թ.
3) Ք.ա. 612թ.
4) Ք.ա. 640թ.

2 **Ե՞րբ է տեղի ունեցել Քերոնեայի ճակատամարտը մակեդոնական և հունական բանակների միջև.**

1) Ք.ա. 337թ.
2) Ք.ա. 336թ.
3) Ք.ա. 339թ.
4) Ք.ա. 338թ.

3 **Ե՞րբ է Մուհամեդը գրավել Մեքքան.**

1) 622թ.
2) 630թ.
3) 637թ.
4) 632թ.

4 **Ե՞րբ է Կրոմվելը մի խումբ սպաների հետ կազմել «Կառավարման միջոց» կոչվող սահմանադրությունը .**

1) 1653թ.
2) 1655թ.
3) 1679թ.
4) 1688թ.

5 **Ե՞րբ է Ազգային կոնվենտը վերացրել միապետությունը Ֆրանսիայում.**

1) 1789թ.
2) 1795թ.
3) 1792թ.
4) 1791թ.

6 **Ե՞րբ է իր աշխատանքները սկսել Փարիզի խորհրդաժողովը.**

1) 1920թ. հոկտեմբերի 17-ին
2) 1919թ. մայիսի 28-ին
3) 1919թ. հունվարի 18-ին
4) 1918թ. դեկտեմբերի 19-ին

7 **Ե՞րբ է տեղի ունեցել Թեհրանի խորհրդաժողովը.**

1) 1944թ. հունիսի 6-ից հուլիսի 12-ը
2) 1943թ. նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 1-ը
3) 1945թ. սեպտեմբերի 17-22-ը
4) 1945թ. հուլիսի 17-ից օգոստոսի 2-ը

8 **Ինչպե՞ս էր Ամենհոտեպ IV փարավոնի նոր անունը.**

1) Էխնաթոն
2) Ախետաթոն
3) Պեր-Ռամզես
4) Թութմոս

76 **Ճակատամարտերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Կոսովոյի ճակատամարտը
բ. Ադրիանապոլսի ճակատամարտը
գ. Նևայի ճակատամարտը
դ. Սուասոնի ճակատամարտը
ե. Մանազկերտի ճակատամարտը
զ. Կուլիկովոյի ճակատամարտը
է. Կատալաունյան դաշտի ճակատամարտը
ը. Չուդ լճի ճակատամարտը
թ. Պուատիեի ճակատամարտը
ժ. Անկարայի ճակատամարտը

1) դ,բ,ա,գ,թ,ը,ժ,ե,զ,է
2) է,բ,ա,գ,դ,ը,զ,ժ,թ,ե
3) բ,է,դ,թ,ե,գ,ը,զ,ա,ժ
4) բ,է,դ,ժ,ը,թ,ե,գ,զ,ա

77 **Կատարել համապատասխանեցում.**

1. զրադաշտականություն
2. բրահմայականություն
3. հուդայականություն
4. կոնֆուցիականություն
5. քրիստոնեություն

ա. Չինաստան
բ. Իսրայել
գ. Պաղեստին
դ. Հնդկաստան
ե. Իրան
զ. Ասորեստան

1) 1-ե, 2-դ, 3-բ, 4-զ, 5-ա
2) 1-զ, 2-ե, 3-գ, 4-ա, 5-դ
3) 1-դ, 2-ա, 3-ե, 4-զ, 5-բ
4) 1-ե, 2-դ, 3-բ, 4-ա, 5-գ

78 **Կատարել համապատասխանեցում.**

#	Իրադարձությունը	#	Տարեթիվը	#	Գործիչը	#	Վայրը
1.	Երկրային ժողովի հրավիրումը	1.	1598թ.	1.	Իվան IV	1.	Վիտենբերգ
2.	Հուգենոտների դավանանքին ազատություն շնորհելը	2.	1265թ.	2.	Մարտին Լյութեր	2.	Լոնդոն
3.	Խորհրդարանի հրավիրումը	3.	1517թ.	3.	Հենրիխ Բուրբոն	3.	Մոսկվա
4.	95 դրույթների հրապարակումը	4.	1549թ.	4.	Սիմոն դը Մոնֆոր	4.	Նանտ

1)

1	2	3	1
2	3	2	2
3	4	1	3
4	1	4	4

2)

1	4	1	3
2	1	3	4
3	2	4	2
4	3	2	1

3)

1	3	4	2
2	1	1	4
3	4	3	1
4	2	2	3

4)

1	1	2	4
2	4	1	3
3	3	4	2
4	2	3	1

73 **Նշված փաստարկներից ընտրել չորսը, որոնք հանդիսանում են հելլենիստական դարաշրջանի հետևանքներ.**

ա. Խիստ սրվեցին Արևելքի և Արևմուտքի միջև առկա քաղաքական և հոգևոր-մշակութային հակասությունները:
բ. Վերացան Արևելքի և Արևմուտքի միջև առկա քաղաքական և հոգևոր-մշակութային սահմանները:
գ. Բուռն զարգացում ապրեցին քաղաքաշինությունը,նավաշինությունը և ռազմական արվեստը:
դ. Ավերվեցին և ամայացան երբեմնի խոշոր բազմաթիվ քաղաքներ:
ե. Տեղի ունեցավ արևելյան միապետության և հունական պոլիսային համակարգի միաձուլում,ուր կենտրոնացած արքայական իշխանությանը զուգահեռ առկա է քաղաքների ինքնավարություն:
զ. Նորաստեղծ հելլենիստական պետությունները դարձան արևելյան բռնատիրությունների նախատիպեր:
է. Քաղաքները վերածվեցին մշակույթի և գիտության առաջատար կենտրոնների:

1) ա,գ,դ,զ
2) բ,գ,ե,է
3) ա,բ,դ,ե
4) բ,գ,զ,է

74 **Նշված պնդումներից որո՞նք են Երեսնամյա պատերազմի հետևանքներ.**

ա. Շվեդիան դարձավ Բալթյան տարածաշրջանի հզոր պետություն և ընդարձակեց իր տիրույթները:
բ. Ֆրանսիան վերածվեց Եվրոպայի ամենաբարձր քաղաքական հեղինակություն ունեցող երկրի:
գ. Ռուսաստանը նվաճեց Բալթյան տարածաշրջանը՝ վերածվելով Եվրոպայի ամենահզոր տերություն:
դ. Ավարտվեց Գերմանիայի քաղաքական միավորումը:
ե. Միջազգայնորեն ճանաչվեցին Շվեյցարական Միությունը և Հոլանդիան:
զ. Նիդերլանդների հյուսիսային և հարավային պրովինցիաները վերամիավորվեցին՝ կազմելով Միացյալ Գավառների Հանրապետությունը(Հոլանդիա):
է. Տապալվեց Եվրոպայում քրիստոնեական կայսրություն ստեղծելու Հաբսբուրգների ծրագիրը:

1) բ,գ,զ,է
2) ա,դ,զ,ե
3) ա,գ,դ,զ
4) ա,բ,ե,է

75 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Նիկիասի հաշտությունը Սպարտայի և Աթենքի միջև
բ. Դարեհ I-ի անհաջող արշավանքը Հունաստան
գ. Պարսկական նավատորմի ջախջախումը Սալամին կղզու մոտ
դ. Իսոսի ճակատամարտը մակեդոնական և պարսկական բանակների միջև
ե. Կորնթոսի համահունական վեհաժողովը
զ. Պերդիկայի սպանությունը
է. Քսերքսես I Աքեմենյանի դավադիր սպանությունը
ը. Պելոպոնեսյան պատերազմների ավարտը
թ. Արբելայի ճակատամարտը մակեդոնական և պարսկական զորքերի միջև
ժ. Աթենական նավատորմի սիցիլիական արշավանքը Ալկիվիադեսի ղեկավարությամբ

1) բ,գ,ե,դ,զ,ժ,ը,թ,է,ա
2) դ,ա,գ,է,ժ,ը,թ,բ,զ,ե
3) բ,ա,գ,է,ժ,դ,ը,ե,զ,թ
4) բ,գ,է,ա,ժ,ը,ե,դ,թ,զ

9 **Ասորեստանյան ո՞ր արքան Ք.ա. 729թ. գրավեց Բաբելոնը՝ հռչակվելով բաբելոնյան թագավոր.**

1) Սարգոն II-ը
2) Աշուրնաձիրապալ II-ը
3) Սալմանասար III-ը
4) Թիգլաթպալասար III-ը

10 **Ո՞ր քաղաքում Պիպին Կարճահասակը հռչակվեց ֆրանկների թագավոր.**

1) Փարիզ
2) Սուասոն
3) Կոմպիեն
4) Ռեյմս

11 **Ո՞ր գործչի կարծիքով անգլիական սահմանադրական կարգն օրինակելի էր և բխում էր ժողովրդի շահերից.**

1) Ռոբերտ Օուենի
2) Էդմոնդ Բյորկի
3) Ջոն Լոկի
4) Ադամ Սմիթի

12 **Ո՞վ էր բաբիականության ուսմունքի հիմնադիրը.**

1) Աղա Մոհամմադը
2) Ալի Մուհամմեդը
3) Մուհամեդ Ալին
4) Աբաս-Միրզան

13 **Ո՞ր քաղաքում է ստորագրվել հավաքական անվտանգության վերաբերյալ պայմանագիրը.**

1) Մոսկվայում
2) Տաշքենդում
3) Կիևում
4) Մինսկում

14 **Ո՞րտեղ է առաջին անգամ տրվել «ազգերի ինքնորոշում» հասկացության սահմանումը.**

1) Փարիզի խորհրդաժողովում
2) Բեռլինի վեհաժողովում
3) ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 7-րդ նստաշրջանում
4) Խորհուրդների համառուսաստանյան 2-րդ համագումարում

15 **Ի՞նչ է «պրինցիպատը».**

1) Հուլիոս Կեսարի անձնական կառավարման շրջանը
2) Ուշ կայսրության ժամանակահատվածը Հռոմի պատմության մեջ
3) Վաղ կայսրության ժամանակահատվածը Հռոմի պատմության մեջ
4) Դիոկղետիանոսի կողմից հիմնված կառավարման նոր եղանակը

16 **Ի՞նչ է «ինվեստիտուրան».**

1) սենյորի կողմից ավատի հանձնում վասալին
2) կայսեր թագադրման արարողություն
3) հավատաքննության դատարան
4) վասալի պարտադիր ծառայություն սենյորի համար

17 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Կյուրոսի ներխուժումը Բաբելոնիա
բ. Սարգոն II-ի կողմից Սամարիայի գրավումը
գ. Ստորին Եգիպտոսի նվաճումը Կամբիզի կողմից
դ. Քաղդեացի Նաբոպալասարի թագադրվելը Բաբելոնիայի արքա

1) գ,ա,բ,դ
2) բ,ա,դ,գ
3) բ,դ,ա,գ
4) դ,բ,գ,ա

18 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Կարլոս Մեծի թագադրվելը կայսր
բ. Պուատիեի ճակատամարտը ֆրանկական և արաբական զորքերի միջև
գ. Ֆրանկական թագավորության հիմնումը
դ. Լյուդովիկոս Բարեպաշտի կողմից Ֆրանկական կայսրության բաժանումը

1) բ,ա,դ,գ
2) գ,ա,դ,բ
3) գ,դ,բ,ա
4) գ,բ,ա,դ

19 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. «Փառահեղ հեղափոխությունը» Անգլիայում
բ. Անձի անձեռնմխելիության մասին օրենքի ընդունումը
գ. Անկախականների կողմից հանրապետության հռչակումը Անգլիայում
դ. Անգլիական խորհրդարանի կողմից Ջեյմս II թագավորին «սահմանադրության խախտման մեջ մեղադրելը»

1) բ,ա,դ,գ
2) գ,բ,դ,ա
3) դ,գ,ա,բ
4) բ,դ,գ,ա

20 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Կարիբյան ճգնաժամը
բ. Ֆոլկլենդյան պատերազմը
գ. Բեռլինի պատի կառուցումը
դ. Հարավային Օսիայի անկախության հռչակումը

1) դ,բ,ա,գ
2) գ,ա,բ,դ
3) գ,ա,դ,բ
4) բ,գ,ա,դ

21 **Ե՞րբ են աթենացիները զորավար Դեմոսթենեսի գլխավորությամբ գրավել Պելոպոնեսի Պիլոս քաղաքը.**

1) Ք.ա. 424թ.
2) Ք.ա. 425թ.
3) Ք.ա. 421թ.
4) Ք.ա. 431թ.

70 **Տալ նշված տերմինների բացատրությունը.**

1. ագորա
2. թերմ
3. ակրոպոլիս
4. աքվեդուկ
5. բազիլիկ

ա. ջրանցույց
բ. հասարակական և առևտրական կենտրոն
գ. եռամաս երկայնավուն սրահ
դ. միջնաբերդ-սրբավայր
ե. հասարակական բաղնիք
զ. հաղթակամար

1) 1-ա, 2-դ, 3-ե, 4-գ, 5-զ
2) 1-բ, 2-ե, 3-դ, 4-ա, 5-գ
3) 1-ե, 2-բ, 3-գ, 4-զ, 5-դ
4) 1-զ, 2-ա, 3-դ, 4-ե, 5-բ

71 **Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. «հավատո գործ»
2. Սալիական դատաստանագիրք
3. Կորտեսներ
4. Լատինական կայսրություն
5. «Ռուսկայա պրավդա»

ա. Դասային միապետության ներկայացուցչական մարմին Իսպանիայում:
բ. Առաջին գրավոր օրենսգիրքը Կիևյան Ռուսիայում:
գ. Կաթոլիկ եկեղեցու կողմից հերետիկոսների ողջակիզում:
դ. Բյուզանդիայից խլված տարածքներում խաչակիրների ստեղծած պետություն:
ե. Հռոմի պապի աշխարհիկ պետությունը Միջին Իտալիայում:
զ. Ֆրանկների սովորութային իրավանորմերի հիման վրա ստեղծված օրենսգիրք:

1) 1-գ, 2-զ, 3-ա, 4-դ, 5-բ
2) 1-գ, 2-զ, 3-բ, 4-ա, 5-դ
3) 1-բ, 2-գ, 3-զ, 4-ե, 5-ա
4) 1-ա, 2-բ, 3-ե, 4-դ, 5-գ

72 **Տրված հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. պարենհարկ
2. պարենմասնատրում
3. ինդուստրացում
4. կոոպերացիա
5. մոնոպոլիա

ա. Ձեռներեցների միավորում, որն իր ձեռքն է վերցնում արտադրության այս կամ այն բնագավառը:
բ. Արդյունաբերության մեջ և տնտեսության մյուս ճյուղերում խոշոր մեքենայական արտադրության ներդրման գործընթաց:
գ. «Ռազմական կոմունիզմի» քաղաքականության տարրերից մեկը:
դ. Կամավոր հիմունքներով ստեղծված ընկերություն, որն օգնում է իր անդամներին արտադրություն,իրացում,սպառում իրականացնելու, վարկ ձեռք բերելու և այլ հարցերում:
ե. Նոր տնտեսական քաղաքականության կարևոր բնորոշ կողմերից մեկը:
զ. Գործունեության տեսակ, որի դեպքում անհատը միջոցներ և կապիտալ է ներդնում որևէ գործի մեջ շահույթ ստանալու նպատակով:

1) 1-գ, 2-ե, 3-բ, 4-զ, 5-դ
2) 1-ե, 2-գ, 3-բ, 4-դ, 5-ա
3) 1-զ, 2-գ, 3-բ, 4-ա, 5-ե
4) 1-ե, 2-բ, 3-գ, 4-զ, 5-ա

67 **Նշված փաստարկներից ընտրել չորսը, որոնք վերաբերում են «Պերիկլեսյան ոսկեդարին».**

ա. Մտցվեց օստրակիզմի համակարգը, որով պետության համար վտանգավոր քաղաքացիները վտարվում էին Աթենքից 10 տարի ժամկետով:
բ. Պաշտոնյաներն աշխատավարձ էին ստանում, իսկ չունևոր աթենացիներին տոներին դրամ էին բաժանում՝ հաճախելու թատրոն:
գ. Ստեղծվեց 10 Ստրատեգոսների խորհուրդ, որոնցից յուրաքանչյուրը հերթով ղեկավարում էր աթենական աշխարհազորը:
դ. Պաշտոնյաները հաճախ նշանակվում էին ոչ թե քվեարկությամբ, այլ վիճակահանությամբ:
ե. Յուրաքանչյուր ազատ աթենացի իրավունք ուներ բողոքարկելու էկլեսիայի կողմից ընդունված նախկին օրենքը:
զ. Հիմնվեց էֆորների հաստատությունը, որին տրված էին գերագույն վերահսկիչ գործառույթներ:
է. Ավարտվեց «Երկար պարիսպների» կառուցումը, որով Աթենքը թշնամու հարձակման ժամանակ հուսալիորեն կպաշտպանվեր:

1) ա,գ,դ,զ
2) բ,դ,ե,է
3) բ,գ,զ,է
4) ա,դ,ե,զ

68 **Նշված փաստարկներից ընտրել չորսը, որոնք բնորոշ էին Իրանում տարածված բաբիականության շարժմանը.**

ա. Բոլոր մուսուլմանների հոգևոր առաջնորդ էր հռչակվում Իրանի շահնշահը:
բ. Իրանում պետք է ստեղծվեր Բաբիների սրբազան թագավորություն, ուր կհաստատվեին սոցիալական արդարություն և հավասարություն:
գ. Ղուրանը հնացել է և պետք է փոխարինվի նոր գրքով՝ «Բայանով»(«Հայտնություն»):
դ. Հռչակվում էր «սրբազան» պատերազմ բոլոր այլադավանների դեմ, մերժվում էր այլախոհությունը:
ե. Պետք է հաստատվեր կնոջ և տղամարդու իրավահավասարություն:
զ. Խրախուսվում էին բազմամուսնությունը և հարեմների ընդլայնումը:
է. Մերժվում էր «անհավատների» դեմ մուսուլմանների սրբազան պատերազմը, խրախուսվում հանդուրժողականությունն այլախոհության նկատմամբ:

1) ա,գ,դ,զ
2) բ,դ,ե,զ
3) բ,դ,զ,է
4) բ,գ,ե,է

69 **Նշված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա. 2007թ. ԱՄՆ-ի պատմության մեջ առաջին անգամ նախագահի պաշտոնը ստանձնեց աֆրոամերիկացի Բ. Օբաման:
բ. 1954թ. ԱՄՆ-ի նախագահ Դ. Էյզենհաուերը դադարեցրեց «վիուկների որսը» երկրում:
գ. 1991թ. Մ. Թետչերին փոխարինեց չափավոր պահպանողական Ջ. Մեյջորը:
դ. 1966թ. Ֆրանսիան դուրս եկավ ՆԱՏՕ-ի ռազմական կառույցից:
ե. 2002թ. ֆրանսիական Սահմանադրությունում կատարված փոփոխության համաձայն՝ նախագահն ընտրվելու էր 5 տարի ժամկետով:
զ. ՄԱԿ-ի հիմնադիր կազմ մտան Հակահիտլերյան միության 51 անդամ երկրներ:
է. ՄԱԿ-ի Միջազգային դատարանն իր գործունեությունը սկսել է 1946թ.:

1) բ,դ,զ,է
2) ա,դ,գ,ե
3) բ,գ,ե,է
4) գ,դ,ե,զ

22 **Ե՞րբ է Հովհան Անհողինի կողմից ստորագրվել «Ազատությունների մեծ հրովարտակը».**

1) 1226թ.
2) 1223թ.
3) 1215թ.
4) 1219թ.

23 **Ե՞րբ է Ռուսաստանում հաստատվել Ռոմանովների արքայատոհմը.**

1) 1602թ.
2) 1613թ.
3) 1612թ.
4) 1609թ

24 **Ե՞րբ է միավորված Իտալիայի մայրաքաղաք հռչակվել Հռոմը.**

1) 1871թ.
2) 1861թ.
3) 1859թ.
4) 1848թ.

25 **Ե՞րբ է տեղի ունեցել Կուրսկի ճակատամարտը.**

1) 1941թ. հունիսի 6-ից հունիսի 14-ը
2) 1943թ. հուլիսի 5-ից օգոստոսի 23-ը
3) 1944թ. փետրվարի 4-ից փետրվարի 11-ը
4) 1942թ. նոյեմբերի 19-ից 1943թ. փետրվարի 2-ը

26 **Փոքրասիական ո՞ր հրվանդանի մոտ է հունական նավատորմը ջախջախել պարսկական նավատորմին.**

1) Սալամինի
2) Միկալեի
3) Թերմոպիլյան
4) Ակցիումի

27 **Ո՞ր հաշտությամբ է ավարտվել Երեսնամյա պատերազմը.**

1) Փարիզի հաշտությամբ
2) Ուտրեխտի հաշտությամբ
3) Վեստֆալյան հաշտությամբ
4) Վալպուրկյան հաշտությամբ

28 **Ո՞ր հոգևորականը գոթերեն թարգմանեց Աստվածաշունչը.**

1) Լևոն I Մեծը
2) Վուլֆիլը
3) Պիեռ Վալդոն
4) Ալբիգոյը

29 **Ինչպե՞ս է կոչվել XVIII դարը.**

1) Վերածննդի դար
2) Լուսավորության դար
3) Ուսյալ դար
4) Արդյունաբերության դար

30 **Ո՞վ էր գլխավորում «Ազատ Ֆրանսիա» հակաֆաշիստական շարժումը.**

1) Դալադիեն
2) Պետենը
3) Շարլ դը Գոլը
4) Բլյումը

31 **Ո՞րն էր Պելոպոնեսյան պատերազմներից հետո հունական հասարակությունում ծագած ճգնաժամի հիմնական հետևանքը.**

1) Հունաստանը նվաճվեց Աքեմենյան Պարսկաստանի կողմից:
2) Ավերվեց և ամայացվեց Աթենքը:
3) Հունաստանը նվաճվեց Հռոմեական հանրապետության կողմից:
4) Հունաստանը նվաճվեց Մակեդոնիայի կողմից:

32 **Ի՞նչ հետևանք ունեցավ ռեֆորմացիոն շարժումը Ֆրանսիայում.**

1) Ռեֆորմացիոն շարժումը վերաճեց երկարատև քաղաքացիական կռիվների:
2) Ֆրանսիայի պետական կրոն հռչակվեց կալվինականությունը:
3) Ֆրանսիայում ձևավորվեց ինքնուրույն պետական եկեղեցի:
4) Ֆրանսիան կորցրեց իր անկախությունը և մասնատվեց Անգլիայի ու Իսպանիայի միջև:

33 **Պատմական գործիչներին դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Պերիկլես
բ. Անտիոքոս III
գ. Լեոնիդաս
դ. Անտիպատրոս

1) գ,դ,ա,բ
2) ա,գ,բ,դ,
3) գ,ա,դ,բ
4) դ,ա,բ,գ

34 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Բալկանյան առաջին պատերազմի սկիզբը
բ. Ճակատամարտը Մառն և Էն գետերի շրջանում
գ. Մուդրոսի զինադադարը
դ. Նիկոլայ II-ի հրաժարականը

1) գ,դ,բ,ա
2) ա,բ,դ,գ
3) ա,բ,գ,դ
4) բ,ա,դ,գ

35 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Ձեր ոչխարները խժռում են մարդկանց»:**

1) Ֆրանսուա Ռաբլեն
2) Էրազմ Ռոտերդամցին
3) Թոմաս Մորը
4) Կամպանելլան

64 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Մենք չենք կարող թույլ տալ մեզ հենվելու ուժերի աննշան գերակշռության վրա՝ դրանով իսկ ստեղծելով ուժերը փորձարկելու գայթակղություն»:**

1) Ի. Ստալինը
2) Ու. Չերչիլը
3) Շ. դը Գոլը
4) Ջ. Բուշ Ավագը

65 **Համապատասխանեցնել պատմական գործչին նրա կառավարման տարեթվի հետ.**

1. Դարեհ I
2. Դարեհ III
3. Կյուրոս II
4. Քսերքսես I

ա. Ք.ա. 486-465թթ.
բ. Ք.ա. 359-336թթ.
գ. Ք.ա. 522-486թթ.
դ. Ք.ա. 558-529թթ.
ե. Ք.ա. 336-330թթ.

1) 1-բ, 2-ե, 3-գ, 4-դ
2) 1-գ, 2-ե, 3-դ, 4-ա
3) 1-ա, 2-բ, 3-ե, 4-գ
4) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ

66 **Կատարել համապատասխանեցում.**

#	Իրադարձությունը	#	Վայրը	#	Տարեթիվը
1.	Քրիստոնեական եկեղեցու պառակտումը	1.	Վերդեն	1.	1613թ.
2.	Բարդուղիմեոսյան գիշերը	2.	Մոսկվա	2.	843թ.
3.	Եպիսկոպոսների և վանահայրերի ընտրության կարգի սահմանման մասին համաձայնագիրը	3.	Փարիզ	3.	1054թ.
4.	Լյուդովիկոս Բարեպաշտի որդիների միջև դաշնագրի կնքումը	4.	Կոստանդնուպոլիս	4.	1572թ.
5.	Ռոմանովների արքայատան հաստատումը	5.	Վորմս	5.	1122թ.

1)

1	4	3
2	3	4
3	5	5
4	1	2
5	2	1

2)

1	3	1
2	4	5
3	2	4
4	5	2
5	1	3

3)

1	4	3
2	3	4
3	1	2
4	5	5
5	2	3

4)

1	2	5
2	5	1
3	4	3
4	3	4
5	1	2

60 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Պլատեայի ճակատամարտը հունական և պարսկական բանակների միջև
բ. Սոլոնի բարեփոխումները
գ. Պերիկլեսի առաջին ստրատեգոս ընտրվելը
դ. Հունական գաղութացման սկիզբը
ե. Սպարտայի թագավոր Արքիդամոսի ներխուժումն Ատտիկա

1) բ,դ,ա,ե,գ
2) դ,բ,ա,գ,ե
3) ե,դ,բ,գ,ա
4) գ,ա,դ,ե,բ

61 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Ինոկենտիոս III պապի կառավարումը
բ. Կոնրադ I Ֆրանկոնացու Գերմանիայի թագավոր դառնալը
գ. Խաչակրաց առաջին արշավանքը
դ. Անտիոքի գրավումը մահմեդականների կողմից
ե. Սալահ ադ Դինի հաղթանակը խաչակիրների նկատմամբ

1) բ,գ,ե,ա,դ
2) գ,ա,բ,դ,ե
3) դ,բ,ա,ե,գ
4) ե,գ,ա,բ,դ

62 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. ՆԱՏՕ-ի ստեղծումը
բ. Ճապոնիայի դուրս գալը Ազգերի լիգայի կազմից
գ. Վերսալի պայմանագրի ստորագրումը
դ. Երկրորդ ճակատի բացումը Եվրոպայում
ե. Հակահիտլերյան միության ստեղծումը
զ. Ճակատամարտ Մառն և Էն գետերի շրջանում
է. Ն. Սարկոզիի Ֆրանսիայի նախագահ ընտրվելը
ը. Ռ. Ռեյգանի ԱՄՆ-ի նախագահ ընտրվելը
թ. Կարիբյան ճգնաժամը
ժ. Վարշավայի պայմանագրի ստորագրումը

1) զ,գ,բ,ե,դ,ա,ժ,թ,ը,է
2) բ,զ,գ,ե,դ,ա,է,ը,թ,ժ
3) ա,զ,գ,ժ,թ,ը,է,բ,ե,դ
4) ե,դ,ա,զ,գ,բ,թ,ժ,է,ը

63 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Չափից դուրս հեռուն նայելն անհեռատեսություն է»:**

1) Ու. Չերչիլը
2) Վ. Վիլսոնը
3) Ժ. Կլեմանսոն
4) Լ. Ջորջը

36 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Մարդը ամբողջովին պետք է ենթարկվի պետությանը, քանի որ մարդկային և հոգևոր ամեն ինչ կորցնում է իր արժեքը պետությունից դուրս»:**

1) Բ. Մուսսոլինին
2) Ա. Հիտլերը
3) Ջ. Ջենտիլեն
4) Ի. Ստալինը

37 **Պատմական գործիչներին համապատասխանեցնել նրանց կառավարման տարեթվերի հետ.**

1. Համմուրապի
2. Սարգոն
3. Թուկուլթի-Նինուրտա I
4. Թութմոս III
5. Ամենհոտեպ IV(Էխնաթոն)

ա. Ք.ա. 1468-1434թթ.
բ. Ք.ա. 1792-1750թթ.
գ. Ք.ա. 2330-2295թթ.
դ. Ք.ա. 1263-1234թթ.
ե. Ք.ա. 1352-1336թթ.
զ. Ք.ա. 1540-1517թթ.

1) 1-գ, 2-բ, 3-զ, 4-դ, 5-ա
2) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա, 5-ե
3) 1-ե, 2-զ, 3-ա, 4-գ, 5-դ
4) 1-զ, 2-դ, 3-բ, 4-ե, 5-զ

38 **Իրավական փաստաթղթերը համապատասխանեցնել դրանց ընդունման տարեթվերի հետ.**

1. «Անձի անձեռնմխելիության մասին օրենք»
2. «Կառավարման միջոց»
3. «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիր»
4. «Իրավունքների օրենք»
5. «Անկախության հռչակագիր»

ա. 1653թ.
բ. 1776թ.
գ. 1679թ.
դ. 1789թ.
ե. 1689թ.
զ. 1649թ.

1) 1-զ, 2-ա, 3-դ, 4-ե, 5-բ
2) 1-դ, 2-ե, 3-բ, 4-զ, 5-գ
3) 1-բ, 2-զ, 3-գ, 4-բ, 5-ե
4) 1-ե, 2-գ, 3-ա, 4-բ, 5-զ

39 **Ո՞ր օրենքներն են համարվում հռոմեական իրավունքի սկիզբը.**

1) Դրակոնյան օրենքները
2) Քարե տախտակների օրենքները
3) Լիկուրգոսյան օրենքները
4) Տասներկու տախտակների օրենքը

40 **Ու՞մ էր նվիրված 1000թ. գրի առնված անգլոսաքսոնական վիպերգը.**

1) Դանիայի թագավոր Բեովուլֆին
2) Դանիայի արքայազն Համլետին
3) Ֆրանկների կայսր Կարլոս Մեծին
4) Ֆրանկների զորավար Ռոլանդին

41 **Ո՞րն է ԱՄՆ-ում քաղաքացիական պատերազմի բռնկման գլխավոր պատճառը.**

1) Իսպանախոս բնակչության ձգտումները վերամիավորվելու Մեքսիկային:
2) Ստրկության պահպանումը հարավային նահանգներում:
3) Անգլիական գերիշխանությունը վերականգնելու կողմնակիցների շարժումը:
4) Ժողովրդավարական և Հանրապետական կուսակցությունների միջև առկա լուրջ հակամարտությունը:

42 **Ի՞նչ դեպքերի հետ էր կապված ԱՄՆ-ի Երկրորդ համաշխարհային պատերազմի մեջ պաշտոնապես մտնելը.**

1) Ճապոնիայի կողմից Ֆիլիպինների և Թաիլանդի գրավումը:
2) Ստալինգրադի և Կուրսկի ճակատամարտերում խորհրդային զորամիավորումների կողմից տարած հաղթանակները:
3) Հավայան կղզիներում տեղակայված ամերիկյան Պիրլ Հարբոր ռազմածովային ռազմակայանի ռմբակոծումը Ճապոնիայի կողմից:
4) Միացյալ Ազգերի հռչակագրի ստորագրումը:

43 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Պունիկյան պատերազմների սկիզբը
բ. Պլատեայի ճակատամարտը հույների և պարսիկների միջև
գ. Կորնթոսի համահունական վեհաժողովի հրավիրումը
դ. Մարաթոնի ճակատամարտը
ե. Պելոպոնեսյան պատերազմների ավարտը

1) բ,դ,գ,ա,ե
2) դ,բ,ե,գ,ա
3) դ,ե,գ,ա,բ
4) գ,ա,դ,բ,ե

44 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Ակրայի գրավումը մահմեդականների կողմից
բ. Խաչակիրների կողմից Երուսաղեմի գրավումը
գ. Եդեսիայի նվաճումը Մոսուլի կառավարիչ Զանգիի կողմից
դ. Երրորդ խաչակրաց արշավանքի ավարտը
ե. Զադար քաղաքի գրավումը խաչակրաց չորրորդ արշավանքի ընթացքում

1) բ,ա,դ,ե,գ
2) գ,բ,ա,դ,ե
3) ա,գ,ե,դ,բ
4) բ,գ,դ,ե,ա

57 **Նշված փաստարկներից ընտրել երեքը, որոնք հանդիսանում են Պելոպոնեսյան պատերազմների հետևանք.**

ա. Ցրվեց Աթենական ծովային միությունը,որի նավատորմը հանձնվեց Սպարտային:
բ. Սպարտան և նրա պելոպոնեսյան դաշնակիցները պարտություն կրեցին, իսկ ողջ Հունաստանը միավորվեց Աթենքի շուրջ:
գ. Աթենքն ընդունեց Սպարտայի գերիշխանությունը:
դ. Աթենքն իր տիրապետությունը հաստատեց Մակեդոնիայի վրա:
ե. Օգտվելով հունական պոլիսների ծանր վիճակից, Աքեմենյան Պարսկաստանը վերականգնեց գերիշխանությունը Փոքր Ասիայում:

1) ա,գ,ե
2) ա,բ,դ
3) բ,դ,ե
4) ա,գ,դ

58 **Որո՞նք են Ռուսաստանում XIXդ. վերջին- XXդ. սկզբին ծագած քաղաքակրթական ճգնաժամի գլխավոր նախադրյալները.**

ա. Կայսրության տարածքային կորուստները Հեռավոր Արևելքում և Սիբիրում:
բ. Պետության ավանդական կառույցների և հասարակությունում գերիշխող պահպանողականների առկայությունը:
գ. Ինքնակալության տապալումը և սոցիալիստական հասարակարգի հաստատումը Ռուսաստանում:
դ. Ինքնակալության կողմից կայսրության ենթակա ժողովուրդների ազգայնական շարժման ճնշումը:
ե. Երկրում գործող ազատական շարժման հալածանքները:
զ. Ցարիզմի վարած ինքնամեկուսացման քաղաքականությունը:

1) ա,գ,զ
2) բ,դ,ե
3) գ,դ,ե
4) ա,դ,զ

59 **Բերված փաստարկներից ընտրել չորսը, որոնք հանդիսանում են Վերսալյան պայմանագրի հետևանք.**

ա. Գերմանիան կորցրեց Էլզասն ու Լոթարինգիան:
բ. Սաարի ածխաավազանի շրջանը 10 տարով դրվեց միջազգային վերահսկողության տակ:
գ. Հռենոսի գոտին հայտարարվեց ապառազմականացված:
դ. Գերմանիան պարտավորվում էր փոխհատուցել հաղթող երկրների նյութական վնասները:
ե. Գերմանիան կորցրեց իր տարածքի 1/5 մասը:
զ. Դանցիգը(Գդանսկ) ստացավ ազատ քաղաքի կարգավիճակ:
է. Գերմանիայի բանակը չպետք է գերազանցեր 150 հազարը:

1) ա,բ,զ,է
2) բ,դ,ե,զ
3) գ,դ,զ,է
4) ա,գ,դ,զ

55 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. պրոտեկտորատ
2. ռայխստագ
3. շովինիզմ
4. լևելերներ
5. նարոդնիկներ

ա. Ցարին զինված ապստամբությամբ ազատական բարեփոխումներ պարտադրել ցանկացող ռուս ազնվական սպաներ:
բ. Խոշոր տերությունների կողմից հպատակ ազգերի ձուլմանը միտված հետադիմական քաղաքականություն:
գ. Միապետականների դեմ ուղղված և բարեփոխումները պաշտպանող կառավարման հատուկ ձև Անգլիայում:
դ. Բարձրագույն օրենսդիր ատյան Գերմանիայում:
ե. Բոլոր քաղաքացիների իրավահավասարության և ժողովրդի ինքնիշխանության համար պայքարող կուսակցության անդամներ:
զ. Գյուղացիական հեղափոխության հետևորդներ Ռուսաստանում, որոնք կազմակերպեցին «Երթ դեպի ժողովուրդ»:

1) 1-բ, 2-գ, 3-զ, 4-ա, 5-դ
2) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ե, 5-զ
3) 1-դ, 2-ե, 3-ա, 4-գ, 5-բ
4) 1-ա, 2-զ, 3-դ, 4-բ, 5-գ

56 **Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. ռազմական կոմունիզմ
2. կոլեկտիվացում
3. ՆԷՊ
4. շուկայական տնտեսություն

ա. 1921թվականից Խորհրդային Ռուսաստանում և մյուս խորհրդային հանրապետություններում կիրառված տնտեսական քաղաքականություն:
բ. Խորհրդային Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի տարիներին բոլշևիկների կողմից իրականացված սոցիալ-տնտեսական և քաղաքական կուրս:
գ. ԽՍՀՄ-ում և սոցիալիստական մյուս երկրներում իրականացվող գյուղատնտեսության բռնի կամ կամավոր մեթոդներով վերափոխում:
դ. Տնտեսություն, որը զարգանում է ապրանքների ու ծառայությունների հանդեպ պահանջարկի և առաջարկի օրենքի, ազատ մրցակցության և ազատ առևտրի սկզբունքների հիման վրա:
ե. Արտադրության և աշխատանքի կազմակերպման ձև, որը հիմնվում է խմբային սեփականության վրա:

1) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
2) 1-ա, 2-բ, 3-գ, 4-ե
3) 1-գ, 2-բ, 3-ա, 4-դ
4) 1-դ, 2-ե, 3-բ, 4-գ

45 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Անգլո-իրանական համաձայնագիրը
բ. ԽՍՀՄ-ի կազմավորումը
գ. Ճակատամարտ Սոմ գետի շրջանում
դ. Զինված հեղաշրջումը Պետրոգրադում
ե. Առաջին հնգամյա պլանը

1) գ,դ,բ,ա,ե
2) բ,դ,ե,ա,գ
3) գ,դ,ա,բ,ե
4) դ,բ,ա,գ,ե

46 **Կատարել համապատասխանեցում.**

1. Ապոլոն
2. Ան
3. Պոսեյդոն
4. Իսիդա
5. Ատում

ա. Աստվածների հայր
բ. Ծովերի աստված
գ. Արևի և արվեստների աստված
դ. Նախաստեղծ-արարիչ աստված
ե. Սիրո և մայրության աստվածուհի
զ. Երկրի աստվածություն

1) 1-բ, 2-դ, 3-ա, 4-զ, 5-գ
2) 1-դ, 2-գ, 3-ե, 4-բ, 5-ա
3) 1-գ, 2-ա, 3-բ, 4-ե, 5-դ
4) 1-զ, 2-բ, 3-դ, 4-գ, 5-ե

47 **Ստեղծագործությունը համապատասխանեցնել հեղինակի հետ.**

1. «Արևի քաղաքը»
2. «Աստվածային կատակերգություն»
3. «Աստվածաբանության հանրագումար»
4. «Ուտոպիա»

ա. Թովմա Աքվինացի
բ. Թոմաս Մոր
գ. Կամպանելա
դ. Ջորդանո Բրունո
ե. Դանթե Ալիգիերի

1) 1-գ, 2-ե, 3-ա, 4-բ
2) 1-ե, 2-ա, 3-բ, 4-դ
3) 1-դ, 2-գ, 3-ե, 4-ա
4) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ե

48 **Կատարել համապատասխանեցում.**

1. Ռ. Օուեն
2. Ջ. Լիլբեռն
3. Է. Բյորկ
4. Օ. Կրոմվել

ա. հավասարական
բ. անկախական
գ. սոցիալիստ
դ. պահպանողական
ե. կոմունիստ

1) 1-ե, 2-բ, 3-գ, 4-ա
2) 1-դ, 2-ե, 3-ա, 4-գ
3) 1-բ, 2-գ, 3-ե, 4-դ
4) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ

49 **Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերի հետ.**

1. Պահպանողական ուժերի խռովությունը ԽՍՀՄ-ում
2. Կոսովոյի անկախության ճանաչումը ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի անդամ երկրների կողմից
3. Մարշալի պլանի գործադրումը ԱՄՆ-ի կողմից
4. Աբխազիայի անկախության հռչակումը

ա. 1990թ.
բ. 2008թ.
գ. 1991թ.
դ. 1948-1951թթ.
ե. 1998թ.

1) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա
2) 1-բ, 2-դ, 3-ա, 4-ե
3) 1-գ, 2-բ, 3-ե, 4-դ
4) 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ

50 **Համապատասխանեցնել մշակույթի գործիչներին այն երկրների հետ, որտեղ ստեղծագործել են.**

1. Ֆ. Կուպեր
2. ՈՒ. Թըրներ
3. Ֆ. Բորրոմինի
4. Վան Գոգ

ա. Իտալիա
բ. Հոլանդիա
գ. ԱՄՆ
դ. Անգլիա
ե. Գերմանիա

1) 1-ե, 2-բ, 3-դ, 4-գ
2) 1-դ, 2-գ, 3-ա, 4-ե
3) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
4) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա

51 **Նշված պնդումներից ո՞րն է սխալ.**

1) Հին Եգիպտոսում կիրառվող պարզեցված պատկերանշանային գիրը կոչվում էր սեպագիր(բևեռագիր):
2) Չինական հիերոգլիֆային գիրը լայն տարածում է ստացել Ք.ա. XVI-XIդդ.. և օգտագործվում է մինչև օրս:
3) Մինոսյան դարաշրջանի Կրետեում կիրառված գծային Ա գրի լեզուն մինչև հիմա պարզված չէ:
4) Հունական աշխարհում այբբենական գրի ներդրմանը նպաստեցին հին հույների սերտ կապերը փռյուգիացիների և փյունիկեցիների հետ:

52 **Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.**

1) Խաչակրաց երրորդ արշավանքի ընթացքում Ֆրասիայի թագավոր Ֆիլիպ II Օգոստոսը խեղդվեց Կիլիկիայի գետերից մեկում:
2) Արևելքում ստեղծված երեք հոգևոր-ասպետական միաբանությունները ենթարկվում էին Երուսաղեմի թագավորին:
3) Երկրորդ խաչակրաց արշավանքը գլխավորում էին Անգլիայի թագավոր Ռիչարդ I Առյուծասիրտը և Գերմանիայի կայսր Ֆրիդրիխ I Շիկամորուսը:
4) Բյուզանդիայից խլված տարածքները մտան նորաստեղծ Լատինական կայսրության մեջ:

53 **Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.**

1) ԱՄՆ-ի նորընտիր նախագահ Ֆ. Ռուզվելտը 100 օրվա ընթացքում ընդունեց 50-ից ավելի օրենք:
2) 1921թ. շեյխ Մուհամմադ Խիաբանու գլխավորությամբ սկսվեց զինված ապստամբություն:
3) 1939թ. մայիսի 22-ին Գերմանիայի և Իտալիայի միջև ստորագրվեց նոր դաշինք:
4) 1941թ. հուլիսի 22-ին Մեծ Բրիտանիան պատերազմում ԽՍՀՄ-ին աջակցելու մասին հայտարարություն արեց:

54 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. պերիօյկոսներ
2. նոմարքոսներ
3. օպտիմատներ
4. լոգոգրափոսներ

ա. Պատմական բնույթի առաջին երկերի հեղինակները Հին Հունաստանում:
բ. Հռոմի Ծերակույտի վերնախավի անդամներ:
գ. Սպարտական պետության սահմանամերձ շրջանների անձնապես ազատ բնակիչներ, որոնք, սակայն, զուրկ էին քաղաքացիական իրավունքներից:
դ. Փարավոնի կողմից տեղերում նշանակված պաշտոնյաներ Հին Եգիպտոսում:
ե. Հին Հռոմում քրմական դասի ներկայացուցիչներ:

1) 1-ե, 2-բ, 3-ա, 4-դ
2) 1-բ, 2-ա, 3-դ, 4-ե
3) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա
4) 1-դ, 2-գ, 3-ե, 4-բ